ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.

* տարածքի բնակչության հավաքագրման շարունակումը, կրկնությունների ճշգրտում, վերջնական արդյունքների ամփոփում

* ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության կանխարգելիչ ուղղվածության ամրապնդումը և ուժեղացումը

* բժշկական սարքավորումներով համալրումը /հատկապես ֆլյուրոգրաֆիկ ու ռենտգեն/

* անցումը ջեռուցման ընդհանուր համակարգից տեղային համակարգի

* ընթացիկ վերանորոգումներ, առանձին կաբինետների ապահովումը տաք ջրով

* ավտոմատացված տեղեկատվական համակարգի ընդլայնումը, համակարգչային ներպոլիկլինիկական ցանցի ստեղծում

* դիսպանսեր հիվանդների /շաքարային ու ոչ շաքարային դիաբետով, պարբերական հիվանդությամբ, էպիլեպսիայով տառապողների/ դեղորայքի հատկացման ու բաշխման վերահսկողության համակարգի ներդրումը

* կադրերի հագեցվածության ավելացում, նրանց որակավորման ու մասնագիտացման գործընթացների շարունակումը

* կենսաթոշակառու և համատեղությամբ աշխատող բժշկական կադրերի աստիճանական փոխարինումը երիտասարդ մասնագետներով

* ընտանեկան բժիշկների ծառայության ընդլայնումը, նոր մասնագետների ընդգրկում՝ բնակչության օպտիմալ թվաքանակի սահմաններում

* բնակչության շրջանում առողջ ապրելակերպի /ծխելու, նստակյաց կյանքի վնասակարության, սպորտով զբաղվելու անհրաժեշտության/ քարոզչությունը

* անվճար ու արտոնյալ պայմաններով դեղորայքի ապահովման բարելավումը

* իրականացվող բժշկական օգնության մատուցվող ծառայությունների որակի բարելավումը

* առողջության առաջնային պահպանման օղակում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով ըստ աշխատանքի արդյունքների խրախուսական ֆինանսավորման մեխանիզմների կիրառման ընդլայնումը

* բժշկական օգնության և սպասարկման շարունակական բարելավումը՝ ամրապնդելով փոխադարձ կապը առաջնային ու մասնագիտացված բուժօգնության մակարդակների միջև

* նախազորակոչային ու զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտությունը, գնահատումը, բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը՝ ներառյալ ուղեգրումը հիվանդանոցային կազմակերպության՝ անվճար բուժման նպատակով

* մինչև 18 տարեկան երեխաների զարգացման ու առողջական վիճակի հսկողությունն ու բուժօգնության իրականացումը, այդ թվում՝ հիվանդությունների կանխարգելման միջոցառումները՝ ներառյալ պատվաստումների իրականացումը

* ծնողների հետ տարվող առողջապահական կրթման ու քարոզչական աշխատանքների իրականացումը՝ երեխայի խնամքի, սնուցման և հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով

* սքրինինգային ծրագրին մասնակցելու, առողջ ապրելակերպի խթանման և ոչ վարակիչ հիվանդությունների հիմնական ռիսկային գործոնների կանխարգելմանն ուղղված հանրային իրազեկման քարոզարշավի շարունակական իրականացումը

* հղիների սոցիալ-հոգեբանական աջակցություն և ծննդաբերությանը ֆիզիկական նախապատրաստումը <<Մայրական դպրոց>> ծրագրով

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ի.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
1.Բժշկական կադրերի համալրում երիտասարդ մասնագետներով:	Չի պահանջվում:	Սպասարկման որակի բարելավում, հաճախումների ավելացում:
2.Կադրերի վերապատրաստում՝ համաձայն ժամանակացույցի:	Պոլիկլինիկայի միջոցներով:	Սպասարկման որակի ապահովում:
3.Ընտանեկան բժշկի ու բուժքրոջ մասնագիտացում:	Պոլիկլինիկայի միջոցներով:	Սպասարկման որակի բարելավում:
4. Կադրերի լրացուցիչ մասնագիտացում՝ համակարգչային գիտելիքների, բժշկական միջամտությունների տիրապետման, անհետաձգելի բուժօգնության և այլ ծրագրերով:	Չի պահանջվում:	Բուժսպասարկման արդյունավետության և որակի բարձրացում:
5. Ավտոմատացված տեղեկատվական համակարգերի ներդրում. ա/ դիսպանսեր հիվանդների դեղերի հատկացման վերահսկում բ/ ներպոլիկլինիկական դեղերի ծախսի վերահսկում:	Պոլիկլինիկայի միջոցներով:	Աշխատանքների որակի բարձրացում և արդյունավետություն:
6.Ամբուլատոր բժշկական քարտերի շարունակական նորացում:	Պոլիկլինիկայի միջոցներով:	Հետևողականություն և ռիսկի գործոնի հնարավորինս նվազեցում:
7. Պոլիկլինիկայի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվական ուղեցույցի, մանուկների խնամքի ու հղիության պաշտպանության մասին բժշկական թերթիկների ստեղծում և տարածում	Բարեգործական կազմակերպությունների, պոլիկլինիկայի	Բնակչության տեղեկացվածության և մատչելիության ապահովում:

բնակչության շրջանում:	միջոցներ:	

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1.ՀՀ Առողջապահության նախարարության ամենամյա չափորոշիչներին բուժանձնակազմի ծանոթացում, դրանց իրականացման վերահսկողություն:	Չի պահանջվում:	Արդյունավետության և որակ:
2. Բնակչության բուժսպասարկման որակի բարելավում. որակի չափորոշիչում ընդգրկված հիվանդություններից բացի հետևել կանխարգելիչ նպատակներով կատարվող այցերի ընդգրկվածությանը և որակին:	Չի պահանջվում:	Որակի բարելավում:
3. . Բնակչության ամբուլատոր սպասարկման բարելավում՝ ուղղված հատկապես հիպերտոնիկ հիվանդների, սրտի իշեմիկ հիվանդությամբ, շաքարային դիաբետով հսկվող հիվանդների դեղորայքային, բուժական, վերականգնողական միջոցառումների համալիր ծրագրերի իրականացմանը:	Չի պահանջվում:	Հաճախումների ավելացում, բուժսպասարկման արդյունավետության բարձրացում:
4. Բնակչության շրջանում լայն քարոզչական աշխատանքի իրականացում՝ առողջ ապրելակերպի, հիպերտոնիկ հիվանդության, քաղցկեղի վաղ հայտնաբերման , ծխելու դեմ պայքարի և այլ ծրագրերով:	Չի պահանջվում:	Առողջության պահպանում:
5. Մանկաբարձագինեկոլոգիական բուժսպասարկման իրականացում՝ ըստ հաստատված չափորոշիչների՝ հսկողություն սահմանելով հղիների վաղ ընդգրկմանը, նրանց լիարժեք հետազոտությունների իրականացմանը. ուժեղացնել կապը ծննդատների հետ:	Չի պահանջվում:	Սպասարկման արդյունավետություն և որակ:
6. Ըստ սահմանված չափորոշիչների՝ իրականացնել առողջ մանուկների հսկողության ծավալները և հիվանդների շարունակական հսկողության ապահովումը:	Չի պահանջվում:	Սպասարկման արդյունավետություն և որակ:

III . ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1.Տարածքի բնակչության թվաքանակի ճշգրտում և հետագա փոփոխությունների վերահաշվարկ:	Չի պահանջվում:	Եկամուտների ավելացում:
2. Լրացուցիչ վճարովի ծառայությունների ընդգրկում/ ֆիզիոթերապիա, բժշկական մերսում, ստոմատոլոգիա, պարբերական բժշկական հետազոտությունների անցկացում և այլն/:	Չի պահանջվում:	Եկամուտների ավելացում:
3. Ապահովագրական ընկերությունների հետ աշխատանքային ծավալների մեծացում:	Չի պահանջվում:	Եկամուտների ավելացում:
4. Նոր սարքավորումների՝ հատկապես ֆլյուրոգրաֆիկ ու ռենտգեն սարքերի ձեռքբերում:	ՀՀԱռողջապահության նախարարության հիմնադրամ, բարեգործական կազմակերպություններ:	Եկամուտների ավելացում, ծախսերի կրճատում:
5. Միջհիմնարկային ծախսերի, հատկապես թմրանյութերի ու հոգեմետ դեղերի պահպանության միջոցների կրճատում:	Չի պահանջվում:	Ծախսերի կրճատում:
6. Գնումների գործընթացի արդյունավետ կազմակերպում:	Չի պահանջվում:	Տնտեսված միջոցներով նոր դեղորայքի ձեռքբերում:
7. Շենքի ընթացիկ վերանորոգում, առանձին կաբինետների ապահովում տաք ջրով, տեղային ջեռուցման ապահովում:	Բարեգործական կազմակերպություններ, պոլիկլինիկայի միջոցներ:	Աշխատանքի պայմանների բարելավում, ծախսերի խնայողություն:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ

Պոլիկլինիկայի առկա կարողությունները լիարժեք պայման են ժամանակակից մակարդակի բուժօգնության և սպասարկման իրականացման համար՝ առողջության առաջնային պահպանման սպասարկող օղակում: Հիմնական ուժը պոլիկլինիկայում գործող ընտանեկան բժիշկների գրասենյակներն են, որոնք պետք է համարել կայացած, և հարկավոր է ապահովել դրանց է՛լ ավելի կատարելագործման շարունակականությունը: Ընտանեկան բժշկության ծառայությունն ունի համալրման կարիք հատկապես երիտասարդ մասնագետներով, և առաջիկայում այս խնդրին պիտի տրվի համապատասխան լուծում:

Բժշկական գործունեության մեջ կարևոր չափանիշը որակյալ աշխատանքն է, որը պետք է գնահատվի համարժեք վարձատրությամբ. հուսով ենք՝ այս խնդիրը ևս առաջիկայում կստանա համապատասխան լուծում: Առողջության առաջնային պահպանման ծրագրերում բուժօգնությունն ու սպասարկումը, հասանելի ու մատչելի լինելով ողջ բնակչությանը, պետք է իրականացվեն ժամանակակից պահանջներին համապատասխան: Այս խնդրի կարևոր պայմանը նոր սարքավորումներով ու տեխնոլոգիաներով առաջնային

օղակի համալրումը, կաղրային ներուժի բարելավումն է: Միայն այս միջոցառումներով կարելի է կյանքի կոչել առողջապահության նախարարության մշակած չափորոշիչները: Մարդկանց առողջության պահպանումը, վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, մահացության իջեցումը հատկապես մանկական տարիքում, կյանքի որակի բարելավումը առողջ ապրելակերպի քարոզչությամբ յուրաքանչյուր բուժաշխատողի մասնագիտական պարտքն է, և այն իրագործելի է: Մշակված ծրագրերը, մեր կարծիքով, իրագործելի են առաջիկա տարիների համար:

Կազմեց՝ Հ. Վարձելյան